

Տ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԱՐՔԱՑԿԱՂՆԻ ՎԱՆՔ

ԱՐՔԱՑԿԱՂՆԻ ՎԱՆՔ. — Կիլիկիոյ երբեմն հռչակապանծ և եպիսկոպոսանիստ վանքերէն մին էր սա, որ կ'իսկնար Մսիսի աբեղեւեան հարաւակողմը Նուր լեւան Պող Ազաճի կոչուած կաղնիներու, սօսիներու, բեւեկիներու, թթենիներու և ձիթենիներու անտառի մէջ։ Կաղնիներու մէջ ծածկուած լինելուն պատճառաւ անշուշտ այսպէս կոչուած է. կը կոչուէր նաեւ Խճկտոր (այսինքն Հաճկատար), ուսկից կը գուշակուի թէ եկեղեցին նուիրուած էր Ս. Աստուածածնի, վասն զի սուրբարար Հանգյակատար մակիկէրը Տիրամօր կը տրուի։ Յայտնի չէ վանացս սկզբնաւորութեան պատմութիւնը, բայց կը յիշուի ժիգ զարու կիսուն. 1167ին, Մեծին Լեւոնի հօր՝ Ստեփանէի խաչուած դիակը բերին հոս թաղեցին, Նոյնպէս 1203ին հոս հանգուցաւ Գրիգոր Ապիրատ կաթողիկոսի մարմինը։ Նոյն ժամանակի վանահայրն Դաւիթ արքեպիսկոպոս, որ Լեւոնի թագադրութեան հանդէսին ներկայ եղող եպիսկոպոսներու շարքին մէջ առաջին նշանակուած է, քանի մը տարի վերջը կաթողիկոսական գահը բարձրանալով իւր հայրապետութեան առաջին երկու տարիները (1206—8) բնակեցաւ վանացս մէջ։

Ձեռագրաց յիշատակարաններու մէջ վանքս կոչուած է «... հռչակապ մայրաքաղաքացեալ սուրբ աճապատու Արքայակաղնի», այնչափ բարձր և պատուաւոր տնտեսներ ունենալուն մէկ պատճառն ալ այն է, որ Լեւոնի ժամանակ Մամեստիա քաղաքը, որուն եպիսկոպոսը կը նստէր վանացս մէջ, զեռ Հայոց մայրաքաղաքը կը համարուէր։

Արքայակաղնի վանքը ունէր բազմաթիւ միաբաններ, իրեն գրադարանը լի էր հագուազիւս ձեռագիրներով, և մեղուալան աշխատասէր կրօնաւորները շարունակաբար կը

գրէին և կ'ընդօրինակէին ուրիշներ։ 1269 տարւոյ մեծ երկրաշարժէն սաստիկ փնտռուեցաւ մենաստանս, ինչպէս նաեւ իւր շուրջը գտնուած բազմաթիւ ճգնարանները, աղօթանոցները կործանեցան։ Ժամանակակից գրիչ մը ողբալով կը նկարագրէ այդ տխուր պատահարը։ Այս կործանմանէն վերջ թէն յոմանց նորոգուած կը համարուի Արքայակաղնի վանքը, սակայն ինչպէս կ'երեւի չէ կարողացած երկրորդ անգամ հասնիլ իւր նախկին պայծառութեան և փառքին։

Վանքս մեծ հռչակ ստացած է իբրեւ հայկական երաժշտագիտութեան կեդրոն. բազմազան եղանակներով մեղեդիներ և այլ եկեղեցական երգեր հնարուած են Արքայակաղնիի երաժշտապետներէն և երաժշտաւորներէն։ Այս երգերը յատկապէս կը կոչուին Մանրաշունչք և կցառաղք. բազմաթիւ օրինակներ ընդօրինակուած են այլ երգերէն, բայց գեղեցիկ զունագոյն ոսկենկար զարդերով, և տարածուած են թէ Կիլիկիոյ և թէ Հայաստանի միւս վանքերը։ Մի և նոյն երգը քանի մը տեսակ եղանակներ ունէր և ամէն հղանակ առանձին անսամբ կը կոչուէր։ Արքայակաղնի վանքի եղանակներու տեսակն կը հասնէր եօթանասունի. մեր այսօրեան եկեղեցական երաժշտութեան մէջ անոնցմէ հազիւ մէկ քանին մնացած են։ — Սխառագ, 253—254.

ԱՌԱՆՑ ԿՈՒ ԱՌԱՆՍ

ԱՌԱՆՑ ԿՈՒ ԱՌԱՆՍ. — Վասպուրա կանի Տոսպ գաւառի գիւղերէն առաջինն է, որ վան քաղաքէն հեռու է $\frac{3}{4}$, ժամ հեռու է, ծովեզերքը գէպ է Նիսիսի։ Թուրքերը զիւր կ'անուանեն Իսկիշէ քեօյիւ այսինքն ճաշահանգստի գէշ ըստ որում գիւղս է առաջին նաւահանգիստ ոչ միայն Վանայ այլ և ամբողջ Ազնունեաց ծովակին։ Գիրքն տափաբակ է և տեսարանն հիանալի. ունի պաղատու ծառատաններ և բաւական թուով մեծամեծ և պատուական խառողի այգիներ։ Գիւղիս սկզբնաւորութիւնը շատ հին լինելու է. Մեծին Ներսէսի պատմութեանէն կը

սեղեկանանք, որ 360 թուականի ժամա-
նակները, Մհարոյ երէջի զրաժի համեմատ,
սուրբ Հայրապետ Վասուրականի կողմերը
երթալով շատ օրեր կեցեր է այս մեծ և ա-
նուանի զիւրաբարքս խիստ հանելով ասոր
ծովահայեաց սրանչելի զրիցը, երկնաման
եկեղեցեաց և առաջարար ջրերուն, որ և
ասիէ մեկնած ժամանակ օրհնիւր է Աւան
բայր իւր սահմաններով ըսելով «Մի նուա-
զեցիս ի բարոսրեանց քոց յաշխտեան»:

Դովակի կատաղի ախբները երբէք հան-
գիստ չեն թողուցած զիւրիս բնակիչները,
որոնք շարունակ ստիպուած են իրենց խեղճ
անակները ծովերէն զկայ ի վեր փոխադրել:
Այժմ գրեթէ բոլորովին փոխուած է Աւանց
իւր նախկին տեղէն. Ս. Յովնանէն առումը
չին եկեղեցին ալ գրեթէ 70 տարի առաջ
ծովէ իւր մէջն առաւ: Այժմեան եկեղեցին
ես կը կոչուի Ս. Յովնանէն՝ որ նախորդ
եկեղեցիէն 60—70 մետր հեռու կառուցած
են չափաւոր մեծութեամբ և մայելուչ դիւրով.
մետր կայ վարժարան մը, որուն աշակեր-
տաց թիւը կը հասնի 80ի: Աւանց 300 տու-
նէն աւելի բնակիչ ունի, ամբողջ Հայ, որք
խիստ ճարտար են և ընդհանրապէս կը զբա-
ղին նաւավարութեամբ, երկրագործութեամբ,
այգիղգործութեամբ և բոլակ հանելու արհես-
տով: Նաւավարութեան մէջ այնչափ ճարտար
են, որ զիշխուան ամենախաւար ատեններն
անգամ ծովուն վրայ ճամբորդութիւն կ'ընեն
առանց կողմնացոյցի: Վանայ ծովային վա-
ճառակաւութեան միակ ճանապարհն և դուռն
լինելով՝ աշխոյժ և շարժուն վիճակ մ'ունի:
Բարակազորները ծովակի մակերեւութն ա-
ւելի ցած ածուներու մէջ կ'առնեն ջուրը,
որ արեգական ջերմութեամբ ջրային մա-
սունքն զոլորշիանալով 120 օր վերջը, ածու-
ներուն երեսը կը մնայ 3—5 մետր թանձրու-
թեամբ ծովային աղը կամ բորակը: Այս
բորակը ապա սղոցով քառակուսի կտորնե-
քու վերածելով վաճառելու կը զրկին ի Վան,
Բաղէշ, Սղերդ և մինչեւ Պարսկաստան: —
Այժմեայ վասպաշարական, 262—264: Նկա-
րագր. Ռեզեչյոյսթիան, Բ. 202—212:

ԲԱՐԵՐԻ

ԲԱՐԵՐԻ, ԲԱՅԲԵՐԻ կամ ՊԱՅՊՈՒՐԹ.
BAÏBOURT. Թ. بايبروت. Յն. Παϊπερτε կամ
Βαϊβερδων. — Ի հնումն նշանաւոր բերդա-
քաղաք Հայաստանաց, և այժմ զիւստը
քաղաք կամ աւան համանուն գաւառակին:
Կառուցուած է Սեւ ծովէն 5040' բարձր
բլրակաձեւ գաղտնավայրի մը վրայ. արեւե-
լեան և արեւմտեան կողմերէն պարսպալ է
ցած լեռներով, իսկ հիւսիսային կողմը ար-
ձանացած է բարձր քարալեւծ մը՝ երկնալով
արեւմուտքէ արեւելք. միայն հարաւային
կողմը ազատ և հարթ է, ուսկից կ'երթցուի
կարին՝ որ կ'ինկնայ քաղաքիս արեւելեան
հարաւային կողմը 124 հզրմ. հեռաւորու-
թեամբ: Տեղւոյս դիրքը, անունը և մերձա-
կայ բովուրց սահմանները կարծիք կու տան
թէ Հայոց հնագոյն քաղաքներէն մին լինի
սա, և թերեւ շինուած լինի Հայկազն Ե-
րուանդեան Տիգրանի Բաբ որդիէն, կամ
լաւ եւ Բայ անուամբ մէկէ մը, վասն զի
հնագոյնները Բայքերու կ'անուանեն. աւան-
դութիւն մ'ալ կայ, թէ Սկիւթացիք շինած
են Մեծին Ալեքսանդրի ժամանակ:

Մեր հին պատմութեան մէջ առաջին ան-
գամ կը յիշուի Ա. դարու վերջերը Երուան-
դայ օրերը, նոյն ատենները Սմառտ Բիւրա-
տեան քաջը «... զերկուս գտաւրս իւր՝
զՄիմասանոյշ և զՄիմասունհի նստուցանէ ի
Բայքերի, արս քաջս թողլով ի վերայ ամ-
բոցին: ... Առաքէ Երուանդ և սատակէ
զքաջսն ի Բայքերի, զերեւալ զգտաւրս
Սմառտայ՝ պահէ յամրոցին Անի ոչ վատ-
թարապէս»: Խոր. Բ. 15, 16: Ասկէց կ'ե-
րեւի թէ ժամանակին ամուր բերդերէն մին
է եղբի, իւր կարծուի, թէ Բարձր Հայոց
Սպար գաւառի մէջ բնակող Բաքրատունիքնե-
րը, տիրած լինին նաեւ Խաղտեաց սահման-
ներուն և ամուր բերդաքաղաքիս: Յուստի-
նիանոս կայսրը 2 դարու մէջ զեռ աւելի
ամրացուց քաղաքս, նոր բերդ կառուցանե-
լով հիւսիսային լեռան գագաթը, որուն ա-
ւերակները տակաւին կը տեսնուին: ԺԱ
դարու կիսուն Տուրքիի զօրքերը Խաղտեաց

աշխարհի վրայ աստատակամ ժամանակ, եւ կան նաեւ մինչեւ բերդաքաղաքի մօտ բայց «... հանդիպի անդ զունդ մի ի զօրացն Հոռոմոց որ կոչին Փոռանկը, որք յանդէսս յիմեանց ի զիմի հարեալք ճակատեցան. և յողորմութենէ Աստուծոյ զօրացան զունդն Հոռոմոց, և յաղթեալ թշնամեացն՝ զլլուիս զօրուն սպանին և զբազումս ընդ նմա, և զայլսն ի փախուստ դարձուցեալ, զառ և զզերի զամենայն թափեցին»։ [աւստ. 65. սակայն այս զէպքէն քիչ վերջը, կը թուի թէ զարձեալ այլազգիք վրէժխնդրութեամբ յարձակելով քաղաքիս վրայ, տիրած են և մէջը իշխանութեան արձա հաստատած։ ԺԲ դարու վերջերը կը յիշուի Բաբերգի Հայ ուխտը Աստուածատուր անունով բարեպաշտ մէկը, որ զրել տուած է Մշոյ Առաքելոց վանքի մէջ պահուած ձիւ և սուուար տօնականը կամ ճառընտիրը։ Նոյն անձը ԺԳ դարու սկիզբը անիրաւ տեղը սպանուեցաւ քաղաքիս Ալատտին ամիրայէն։ 1307ին Սոսոյ փողովքին մէջ կը յիշուի քաղաքիս աւուսամբ եպիսկոպոս ոմն Սաւակի ԺԴ դարու սկիզբը Բաբերգին անցաւ վենետիկեցի Մարկոս Պոզոսը՝ որ և կը յիշէ քաղաքին հիւսիսային արեւմտեան կողմը, կիւմիշխանէի ճանապարհի վրայ գտնուող արծաթահանքը։ Յաջորդ դարու մէջ 1474ին անցաւ վերնոյն հայրենակից Յովսէփ Պարպարոյ, որ քաղաքին ամրութիւնը կը գովէ և մէջը 1500 տուն կը հաշուէ։ ԺԵ դարու վերջերն ալ ուրիշ վենետիկեցի ճանապարհորդ մը՝ Ճէ. մելլի, Բաբերգէն անցաւ։

Հինաւորը բերդն կը գտնուի քաղաքին հիւսիսային կողմը բրգաձեւ քարայրեան մը գագաթան վրայ, որ երեք կողմանէ անմատոյց է։ Շրջապատուած է կրկին պարիսպներով, որոնց հիմունքը ձգուած են քարաւերան անհարթութեան համեմատ տեղ մը բարձր, տեղ մը ցած և ներս ու դուրս. այդ պարիսպները 1828ին Ռուսաց յարձակման ժամանակ մեծաւ մասամբ կործանեցան, և այժմ քայքայեալ միմեկի մէջ են։ Նոյն յարձակման միջոց ներքնապարսպի մէջ զբոսնուած տուններն ամբողջապէս քանդուեցան և կործանեցան, և այժմ բերդը անբնակ է

և պաշտպան անգամ չունի։ Կ'ընտի թէ 1828ին Ռուսները Բերդի պահարաններէն միոյն մէջէն հանած են շատ զէնքեր, կահեր և արծաթեայ որորան մը։

Բերդի մէջ քովէ քով կան երկու ջրամբարներ կամ քարափոր ջուր բերելու ճանապարհներ. ասոնց շինուածքն և ձեւն նման են Եւրոպիոյ և Ամստիոյ ջրամբարներուն, առ ի շեղ սանդղաձեւ փորուած մինչեւ դետեղբերը. ասոնք եւս խանդարուած և քայքայուած են։ Բերդի արտաքին դրան ալ և ձախ կողմերը կան առիւծի և ընձու անարուեստ բարձրաքանդակ պատկերներ, և շատ մը արարացի արձանադրութիւններ թէ՛ զընդունելու և թէ՛ ներքնապարսպի վրայ, որոց մէջ կը կարդացուի Ղլիճ Ալայնի անունը։ Բայց բերդին շինուածոց մէջ կը տեսնուին նաեւ յունական ձեռագ ձեռագորգներ, ինչպէս հին կործանեալ եկեղեցի մը, և յունարէն եղծուած արձանադրութիւն մ'ալ Եւրոպացիք վերցուցած տարած են։

Ճորոխ գետը կ'անցնի քաղաքիս մէջէն հարաւէն զգալի հիւսիս և երկու մասերու կը բաժնէ զայն, սրբ իրարու հետ կապուած են 3—4 կամարջներով։ Գետս իւր ընթացքին մէջ ունեցած երբեմն աղմկալից շառաւման համար, բնակիչներէն կը կոչուի Տէլի (Յիմար) Ճորոխ, որ Քաղաքիս առաջին բնական զարդն է։ Իւր երկու կողմը բաւական ընդարձակութեամբ ծառազարդ պարտէզներ, եզերքներուն վրայ եւս կարգաւ ծառեր տնկուած են։ Տեղաւայ բոլոր ջրաղացները կը զանան գետոյս երազընթաց ջրերով։ Ճորոխի վրայով անտառներէն կը արուած փայտերը կը բերեն Բաբերգ։ Գետային ճանապարհով քաղաքս միացած է Ռուսաստանի Պաթում քաղաքի հետ, որմէ հեռու է զրեթէ 126 հզմ։ Հակառակ իւր այս համեմատաբար նպաստաւոր դրից, որով մէկ կողմանէ ցամաքային ճանապարհով կը միանայ Տրապիզոնի, Կարնոյ և Պարսկաստանի հետ, և միւս կողմանէ Ռուսիոյ հետ, այսօրուան օրս Բաբերգ այն աստիճանի ծաղկած չէ ինչպէս երբեմն։ Սակայն իւր շրջակայից երկրագործական արդիւնաբերու-

թիւնք խիստ առատ եւ նշանաւոր են. ըստիր են արմտիքն՝ ընդդէմներ, պտուղներ, ձի, արջառ, ոչխար, եւ այլն: Բարերդ արհեստներու մէջ եւս իւր լաւ համբաւն պահած է տակաւին: Մէկ խօսքով, թէ եւ իւր նախկին մեծութենէն ինկած կ'երևի, բայց ապագային մէջ անտարակոյտ պիտի ստանայ աւելի նոր փայլ մը եւ վաճառականական ծաղկած մի՞նակ մը:

Բարերդ քաղաքի բնակչաց թիւն որոշ չենք գիտեր, բայց յայտնի է որ բազմութեան կողմանէ առաջ են Մահմետականք, յետոյ Հայք եւ ի վերջոյ Յոյներ: Իսկ համանուն գաւառակի բնակիչը ըստ Վ. Քիլեի կը հաշուին 58343 հոգի, հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմետականք . . .	46812	հոգի
Հայք	10379	»
Յոյնք	389	»
Այլեւայլք	355	»

Գումարն... 58343 հոգի:

Քաղաքին տները մեծաւ մասամբ միայարկ են, ընդհանրապէս անշուք եւ ողորմելի տեսքով եւ հողայարկ. գետին եղբրքներէն երթալով կը բարձրանան մինչեւ լեռանց ստորոտը եւ նոյն իսկ անոնք բարձրութեան կէտը կը հասնին: Այս պատճառով տուներէն շատերը մէկ կամ երկու կողմերէն խրած են հողի մէջ եւ տանիքները հաւասարած են բլրոյն: Քաղաքի մէջ կայ կառավարչի (միւթէսարքի) պալատը, զորանոց, բանտ, 3 բուլնիք, 15 հասարակաց աղբիւրներ, 484 կրպակ եւ վաճառատունք, 40 խան, 177 ցորենի ջրաղացք, 3 կտաւատի հնձան, 19 փուռ, 1 կաշեգործարան, 2 օճառի, 1 ներկի եւ 1 մոմի գործարաններ: Նշանաւոր է հոյաւ կապ եւ քառազմէթ պէգէսքներ, բայց ներքը խիստ մթին է եւ աղտոյի: Մզկիթներէն հնաշէնը եւ գլխաւորը Ուլաշաձաձի, հին ժամանակ եկեղեցի եղած է: Հայաց եկեղեցիները թուով չորս են՝ Ս. Աստաճածաձի, Հրեշտակապետք, Աստաճածամայր եւ Ս. Յովհանն: Առաջին երկուքը կը յիշուին ժե՛ղ պարու սկիզբը դրոց յիշատակարանաց մէջ: Ս. Աստաճածանի եկեղեցին՝ 1848 թուին

գեղեցիկ ձեւով մը նորոգուած է Կիւրէնցի կարապետ վարդապետի առաջնորդութեան օրովը, տեղացի Տէր Յովհաննէս աւագ քահանայի աջակցութեամբ: Միւս եկեղեցիները ներքուստ մթին են եւ արտաքին երեւոյթնին ալ խեղճ: Ժողովուրդը եկեղեցիներու թուով թաղերու բաժնուած են. ունին արաւկան եւ իգական սեռի յատուկ մէկ մէկ վարժարան: Քաղաքին արեւելակողմը բարձր դիրք վրայ տարածուած է Հայաց բնդարձակ գերեզմանատունը, ուր կան մինչեւ ՊԶԶ (= 1437) թուականաւ արձանադրութիւնք: Իսկ արեւմտեան կողմը զաշտավայրի վրայ կան թրքաց երկու ուխտական շէրիֆներ, մին բուրջի բարձր պատուհանով եւ կրօնանած գմբէթով եւ միւսն բազմանկիւն՝ եւ մէջը կայ զագաղաձեւ երկայն գերեզման:

Բարերդի գաւառակն կ'ինկնայ կարնոյ կուսակալութեան տակ, ե ունի 186 զիւղեր, յորս զլիւսւորաբար 27ը հայաբնակ են, որոնք վերջին դէպքերու ժամանակ մեծապէս ֆլասուեցան, քաղաքն եւս իւր ֆլասներն եւ զոչերն ունեցաւ:

Երկրազորութիւն. — Բարերդի եւ իւր բուրբ դիւերու զլիւսւոր բերքներն են. արմատիք, կտաւատ, լուբիա, սիսեռ, ոսխ, կաղամբ, շոգգամ եւ ամէն տեսակ պտուղներ, յորս ընտրի եւ առատ են տանձ, կեռաս, խաղող եւ թուխ: Գաւառակ Սպերու հետ միասին ունի 27000 փեթակ, որոնց մեղրը մեծաւ մասամբ կը սպառեն Կարնոյ կուսակալութեան մէջ, ե մոմը եկեղեցիներու եւ մզկիթներու հարկաւոր եղածին չափ առնելն վերջ, մնացածը Տրապիզոնի ճամբով կը դրկեն Գաղղիա:

Անասունք. — Դարձեալ Բարերդի եւ Սպերու գաւառակներու մէջ կը անուցանեն բազմաթիւ ընտանի անասուններ, որոնց ուժ բողջական թիւն կ'ընէ հաշուով կը հասնի 380 000ի: Արջառոց ցեղէն 60000էն աւելի, ոչխարներու տեսակէն 310 000էն աւելի, ձիոց տեսակէն մօտ 6000 եւ իշոց տեսակէն 2600ը կ'անցնին:

Ճարտարարուեստք. — Բարերդի մէջ եւ շրջակաները կը գործեն մետաքսէ եւ ոսկեթել գեղեցիկ գորգեր, որոնք շատ յարգի

են։ Մնուանի են դաւառակիս զինագործները, իրենց շինած ամէն տեսակ կատարելագործութեան զինքերով։ Դանակագործութիւն, թամբագործութիւն և ամէնէն աւելի պղնձագործութիւնը, լաւ գործունեայ և շահաբեր վիճակի մէջ են, և իրենց արտադրած ապրանքներն իւր փնտուռին։ Բաբերդի մէջ կարուած կոշիկներն և մուճակներն մեծ համբաւ ունին բոլոր կուսակալութեան և մերձակայ բնակչաց մէջ։ Երկաթագործները կատարելապէս կ'աշխատին թէ՛ երկաթի և թէ ուրիշ տեսակ մետաղաց վրայ։ Ոսկերիչներն և գոհարաւաճառներն իւր շինեն արծաթէ, վրան սեռա կիտառածներով զարդարուած, ամէն տեսակ իրեղէններ, այս արհեստով իւր զգածն իւրան Հայք, և իրենք հարգացուցած են, թէ՛ թուրքիոյ զանապան բաղաբաց և թէ Ռուսիոյ և Վրացայաստանի մէջ։

Բաբերդը տարին մէկ անգամ մայիս և յունիս ամիսներու մէջ տօնաւաճառ ունի, որ առաջ հինգ վեց շաբաթ և այժմ 15 օր կը տեւէ։ Այդ աւելոց մէջ բոլոր զելագործ տեսակ տեսակ վաճառքներով բաղաբ կը թափին և Բաբերդը աւելի շարժուն և կենդանի դիւրք մը կ'առնուի։ Տեղգր. Հայաս. 68—70, Ճնպրն. Բաբ. 212—214, Նկրգր. Ողեւորութիւն, Ա. 11—14, Վ. Քիւնե, Ա. 222—226։ Եւ այլն։

2. ՍՈՒՔԻԱՍ ԷՓՐԻԿԱՆ



ՊԱՏՄԱԿԱՆ ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՊԵՐԻՊԵՆԱՆ ԷՍՑԵՐԵՆԻ

(Ծար. տես 356)

§ 9. — Ինչ որ ըսինք այ երկրաբաւոն համար, նոյնն է նաեւ ոյ-ի մասին. Ա. — Բաւաղերի մէջ ոյ կը փոխուի ու յոգնակի սեւականի և ընդհանրապէս սեւականի մէջ. օրինակի համար ձորտեղոյ 43—12, ձորտեղոյ 3—4, յ տառը հոս՝ ինչպէս վերջաւանկ այ ձայնին մէջ, անձայն, միայն արմատական

նշան մ'է, ուստի արձանագրութեանց մէջ ալ զանց կ'ըլլուի։

Թ. — Բաւերու մէջ ձայնաւորներու առջեւ ըստ արդի արտասանութեան՝ հին հայերէն ոյ կը հնչուի այ։ Կիլիկեանին համար այս հնչումն անտարակոյն է. հմտ. պտղիանք, պտղիք — *bduyeazek, bduyik* (Պետտիք) = արաբ. *badu* (յոգն)։

Պ. — Բաղաձայններու առջեւ ոյ նշանն — արդի արտասանութիւնն հին հայերէնի հետ միաբանելով — կը հնչուի չի հետեւեալ բաւերու մէջ. պալտոյն, *afr. Baldouin* յոյս, *afr. Lonis* (?) Գոյնէր, *afr. Cuilmer* (տես. Gloss.) և այլն։ Սակայն հոս ալ, ինչպէս այ ձայնին մէջ, գրութեան ձեւը տակաւ պատմական է, եթէ ոչ առ հասարակ, սակայն բազմաթիւ դէպքերու մէջ, ուղղագրութեան փոփոխութիւնը արդէն իսկ զայս կը ցուցնէ։ Այսպէս կը գտնուի քոչքտի և քոյքտի, որ բնականապէս *kurvd* պիտի հնչուի. այրոյն, արոյն և արուն առ *Mx. Her.* հոս դարձեալ այրոյ և այրոյ, և այլն։ Լատիներէն բառն *laudamus*, Կիլիկեան թագաւոր — օծութեան կարգին մէջ (*Sisy. էջ 474*) գրուած է չաւ, տաւոյց, այսու ոյ = u։ Ընդհանրապէս ու-ի հետ շատ անգամ հին ոյ (*ui*) գրուած կը տեսնենք. ուժ (դաս. ոյժ). մանաւանդ դասական լեզուին, յետին դարուց մէջ, անուժ (դաս. անոյժ). անոյ (դաս. անոյ). Լեւոնի երգին մէջ (*Dul. 539, 540*) ձեւն յոս, փոխանակ դաս. յոյս-ի, և այլն։

Յետին ու գրութենէ կարելի է յառաջ բերել, որ այս բաւերու մէջ ոյ ձայնը՝ յետոյ ու փոխուած է, ինչպէս ուրիշ շատ տեղեր, ուր դեռ հին ձեւը ոյ՝ հաստատուն կեցած է. Թէպէտ և այս գրութեան համեմատ ոյ-ի երկրաբաւական յատկութիւնը՝ Սմբատայ լեզուին և յետնագոյն Կիլիկեանին համար, շատ երկրայական կրնայ ըլլալ։ Սակայն հին Կիլիկեանին համար՝ միշտ ընդհանուր հնչումն *ui* պէտք է ընդունելի ըլլայ։

§ 10. Ա. — Կիլիկեանն իս՝ ձայնաւորաց առջեւ կը հնչուի = *iv*. օր. դիւան. *np*.

1. Հմտ. արձանագրութիւնքն ի *Sisy. էջ 84, 85*, և այլն։